

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԸՆԹԻ ՏԱՐԱԾՄԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



Լ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՍՌՄ ԲԺՇԿԱԿԱՆ գիտությունների ակադեմիայի խսկական անդամ

## ԿՐՈՆԵ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

ՕՐԵԿԱՆ



1954

<u>61(09)</u>		<u>25636.</u>
<u>2-85</u>	<u>Հայկական, լ. Ա.</u>	
<u>Հրանք և բժիշութեան թ. 504.</u>		
<u>7.11.1957</u>	<u>1/87</u>	<u>634</u>

Հ Ա Յ Ա Կ Ա Ն Ս Ս Դ  
ՔԱՂԱՔԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

61(09)  
2-85

ԼՐԱԿԱ

9

Լ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՍՌՄ ԲԺՇԿԱԿԱՆ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ

ԽԸՆԻԴՎԱՄ է 1951 թ.

ԿՐՈՆԸ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

A 163 //



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՍՌ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Л. А. ОГАНЕСЯН  
Действительный член АМН СССР  
**РЕЛИГИЯ И МЕДИЦИНА**  
(На армянском языке)  
Общество по распространению политических  
и научных знаний Армянской ССР  
Ереван—1954

Խմբագիր՝ Գ. ՍՈՒՇԵՂՅԱՆ,  
Ավագ որբագիր՝ Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Վֆ 14525:

Պատվեր 3543:

Տիրած 5000:

Հանձնված է արտադրության 18/XI 1954թ.  
Ստորագրված է տպագրության 29/XI 1954թ.  
Տպագրական 2,25 մամուլ:  
Գինը՝ 50 կ.:

Հայպոլիտրաֆիրատի № 6 տպարան, Լենինի պողոտա № 51, Երևան, 1954թ.

Այս գորույկի վերնագիրն առաջին հայացքից որոշ տարակուսանք կարող է պատճառել նրա՞նց, ովքեր առիթ չեն ունեցել խորապես մտածելու քննարկվող թեմային վերաբերող հարցերի բովանդակության էության մասին։ Հիրավի, ինչպիսի՞ միացնող հանգամանքներով կարող են միմյանց հետ կապակցված լինել մարդկային որոնումների այնպիսի տարբեր բնագավառներ, ինչպիսիք են բժշկությունը և կրոնը։

Բժշկությունը մի գիտություն է, որը թեորիայում հենվում է մատերիալիստական հիմունքների վրա, իսկ պրակտիկայում ներկայացնում է օգտագործական և կիրառական մի բնագավառ, որի նպատակն է պահպանել մարդու առողջությունն ու աշխատունակությունը, կանխել և բուժել հիվանդությունները։ Գալով կրոնին, որը հասարակական գիտակցության ձևերից մեկն է, սա քարոզում է հրաժարումն ամեն երկրայինից և նյութականից, հոգ տանելով մարդու ո՛չ թե մարմնի, այլ միայն հոգու փրկության մասին։

Բժշկական գիտությունը, ինչպես և մարդկային գիտելիքների յուրաքանչյուր այլ բնագավառ, իր մեթոդոլոգիական և ամբողջ նպատակասլաց աշխատանքը կառուցում է փաստական տվյալների, դիտողությունների, փորձի արդյունքների և սրանցից բխող օրինաչափությունների վրա։ Մինչդեռ կրոնը ելնում է գերբնական երեվույթների, զանազան մտացածին իրողությունների, ֆանտաստիկայի ու հրաշքերի հավատից, որոնք չեն կարող բացարձակապես ապացուցվել գիտության մեջ կիրառվող մեթոդներով և ոչ մի կերպ չեն կապվում մեզ շրջապատող իրականության մեջ նկատվող առօրյա փաստերի ու երևույթների հետ։

Այդ իսկ պատճառով կրոնական պատկերացումները մարդուն շրջապատող բնության, կյանքի և հասարակական փոխհարաբերությունների միայն խեղաթյուրված երևույթներն են արտացոլում մարդու ուղեղում։ Նույնիսկ այն դեպքերում, երբ այդ պատկերացումները վերարտադրում են, կարծեք թե, տեղի ունեցած փաստերն ու եղելությունները, ապա այդ էլ, որպես կանոն, կատարվում է անիրական և աղավաղված ձևերով։

Լինելով պատմա-հասարակական երևույթներից մեկը, կրոնը չի կարող կտրված մնալ տվյալ հասարակարգի սոցիալ-տնտեսական հիմունքներից, նրա հետ կապված աշխարհայացքներից, ինչպես և մարդու հասարակական կեցությունից։ Դրա հետևանքով մարդու պատմական կյանքի զանազան էտապներում կրոնը, իր իմացաբանական և սոցիալական արմատներով հանդերձ, փոխում է իր արտաքին ձևերը՝ յուրաքանչյուր հասարակական-տնտեսական իրադրության համապատասխան, բայց և այնպես նրա հիմնական էությունը բոլոր ժամանակներում էլ մնում է համարյա միանման կամ քիչ տարբերվող։

Մասնավորապես մեծ փոփոխությունների է ենթարկվել քրիստոնեական առանձին դավանանքների բնույթը, որ հիմնականում կախված է եղել դասակարգային իդեոլոգիայից և նրա փոփոխականությունից։

Ասվածից բխում է, որ պետք է անհաշտելի հակառիություն գոյություն ունենա մարդկային որոնումների այնպիսի երկու իրարից տարբեր բնագավառների միջև, ինչպիսիք են՝ մեթոդոլոգիապես մատերիալիստական բազայի վրա կանգնած իսկական գիտությունը և դոգմատիկ հիմունքներով կառուցված կրոնական իդեոլոգիան։

Կրոնի և բժշկության առնչության հարցը ուսումնասիրելիս, պետք է նկատի ունենալ մի հանգամանք։ Բժշկությունը իրենից ներկայացնում է բնագիտության մի մասնաճյուղ, հետևաբար, այդ բնագավառում կատարվող աշխատանքը պետք է հենվի բնական գիտությունների մեթոդների վրա։ Ուստի քննարկվող հարցը կարելի է դնել ավելի լայն կերպով և խոսել կրոնի ու գիտության, կամ հատկապես կրոնի և բնական գիտությունների մասին։ Հարցի այդպիսի դրվագքը շի մեղանշի տրամաբանության դեմ։

Բայց եթե մենք մեր թեմայի մասշտաբը սահմանափակում ենք կրոնի ու միայն բժշկության միջև եղած փոխհարաբերությամբ, ապա այդ արված է որոշակի նկատառումներով:

Բանն այն է, որ բժշկական գիտության պատմությունը վկայում է կրոնի և բժշկության միջև անցյալում եղած կապերի մասին, մի բան, որը չի կարելի նույն չափերով նկատել մարդկային գիտելիքների այլ բնագավառներում: Դրան նպաստել են մի շարք հանգամանքներ, որոնց մասին կխոսվի հետագայում և որոնք որոշ երկրներում իրենց ուժն ու նշանակությունը չեն կորցրել նույնիսկ մինչև մեր օրերը:

Բժշկության ու կրոնի ծագման Ելակետային ուղիներն ու աղբյուրները և հետագա զարգացման մոմենտները բոլորովին տարբեր են եղել:

Բժշկության ծագումը կապված է եղել մարդու միանգամայն բնական և պարզ պահանջի հետ՝ օգնություն ստանալ հիվանդությունների ժամանակ, պահպանել առողջությունը և կյանքը: Նա ծագել է դեռ հնագույն, նախապատմական ժամանակներում, մարդկային կուլտուրայի զարգացման արշալույսին: Մի շարք տվյալների համաձայն, հիմք կա նույնիսկ կարծելու, որ բժշկությունը մարդկությունից ավելի հին է և որ նա կարող էր ծագել դեռևս կապկի մարդացումից առաջ, քանի որ հիվանդությունների ժամանակ ինքնօգնության ձգտումը որոշ չափով հատուկ է նաև կենդանական աշխարհին: Համենայն դեպք մարդկային կուլտուրայի պատմությունը բազմաթիվ տվյալներ է պահպանել այն մասին, որ նախնադարյան տոհմային հասարակարգում մարդը կարողանում էր իր առողջության պահպանման համար դիմել որոշ միջոցառումների, որոնք այն ժամանակ դուրս չեին կարող գալ ամենակոպիտ պրիմիտիվ էմպիրիզմի շրջանակներից:

Նախնադարյան մարդը իրեն շրջապատող բնության մեջ հաճախ առիթ էր ունենում տեսնելու այս կամ այն բույսի ազդեցությունը մարդու մարմնի վրա, օրինակ՝ նրա լուծողական, փսխեցնող, կամ որևէ այլ տիպի գործողությունը: Նախնադարյան էմպիրիզմի ուղիով բույսերի բուժիչ հատկությունների մասին ձեռք բերված ծանոթությունը այնուհետև պահպանվում էր մարդկանց

Հիշողության մեջ և ապա, անցնելով սերնդից սերունդ, հիմք էր ծառայում զանազան երկրներում, այսպես կոչված, ժողովրդական բժշկության զարգացման համար։ Այդպիսով, ժողովրդական բժշկությունը փաստորեն ներկայացնում է իրենից ոչ այլ ինչ, բայց եթե այս կամ այն բուժիչ միջոցների մասին տրադիցիոն կերպով, երբեմն ամենավաղ ժամանակներից, մարդկանց հիշողության մեջ պահպանված տեղեկություններ, որոնք չեն կարող որոշ սահմաններում զուրկ լինել նաև ռացիոնալիզմից։

Կրոնի մասին խորհելիս առաջանում են մի շարք կարեոր հարցեր, այն է՝

Կրոնի ծագումը և առաջին կրոնական պատկերացումների սլատճառները, նրա էությունը և սոցիալական հիմքերը, կրոնական ուսմունքների հետագա զարգացմանը նպաստող պայմանները, ժամանակակից կրոնների տարատեսակները, որոնք մեծ մասամբ անհաշտելի հակասության մեջ են գտնվում միմյանց հետ, կրոնի ապագան և այլն։

Այդ հարցերը բոլորովին էլ նոր չեն։ Դրանց վերաբերյալ մինչև այժմ կուտակվել է բավական հարուստ գրականություն։

Սակայն նախամարքսյան շրջանի աշխատություններում այդ հարցերը դիտվում էին սխալ դիրքերից, առանց կրոնի դասակարգային արմատները հաշվի առնելու, համապատասխան սոցիալ-տնտեսական կարգերից անջատ, մի բան, որ զգալի շափով նվազեցնում է այդպիսի ուսումնասիրությունների գիտական արժեքը։

Մարքսիզմի կլասիկների աշխատություններում կրոնի ծագման և էության հարցերը, դիալեկտիկական-մատերիալիստական մեթոդուղիայի լույսի տակ, ստացել են իրենց անբասիր և ճիշտ գիտական բացատրությունը։ Քանի որ այդ հարցերի շատ թե քիչ մանրամասն քննարկումը դուրս է գալիս մեր առջև դրված խնդրի սահմաններից, դրանց վրա մենք կանգ կառնենք այնշափով միայն, որշափով այդ անհրաժեշտ կլինի կրոնի և գիտության, մասնավորապես բժշկության միջև եղած փոխհարաբերությունները պարզելու համար։

Երկրագնդի բնակչության խոշոր խմբեր ընդգրկած մեծ կրոնների հիմունքները կարելի է հասկանալ միայն այն դեպքում, եթե

Հայտնի կլինեն կրոնական իդեոլոգիան առաջացնող պատճառերը նրա ծագման և հետագա զարգացման շրջանում:

Քննարկելով այս հարցը, հետազոտողը կարող է հենվել բազմաթիվ համոզիչ նյութերի վրա, ինչպիսիք են, օրինակ, մեզ հասած հնագիտական տվյալները, հնագույն ժողովուրդների նյութական կուլտուրայի հուշարձանները, ժամանակակից հետամնաց, այսպես կոչված, վայրենի կամ կիսաբարբառոս այն ժողովուրդների ազգագրությունը, որոնք իրենց քաղաքակրթությամբ որոշ շափով մոտիկ են կանգնած նախնադարյան մարդկային համայնքի կուլտուրայի մակարդակին։ Այդ հարցի շուրջը նյութեր կարելի է քաղել նաև հնագույն ֆոլկլորից, լեզվաբանությունից, մարդաբանությունից և այլն։

Այս ուղիներով ստացված տվյալների հիման վրա պարզվում է, որ կրոնը, ավելի ճիշտ՝ նրա նախնական սաղմերը առաջացել են նախնադարյան համայնական կարգերի ամենաուշ ստադիաներում։ Դրան նախորդել է շատ երկարատև նախակրոնական մի շրջան, երբ մարդը գաղափար չուներ կրոնի մասին։ Նրա ուղեղը դեռ այնքան շեր զարգացել, որ կարողանար ստեղծել շատ թե քիչ բարդ վերացական գաղափարական պատկերացումներ։ Սակայն այն փաստից, որ մարդը իր պատմական կյանքի վաղ շրջաններից արդեն փնտրում էր գերբնական սկզբունքներ, որոնք իբր թե անընդհատ խառնվում էին նրա կյանքի իրողություններին, դեռ չկարելի եղրակացնել, որ կրոնն սկզբնապես հատուկ է եղել մարդկային բանականությանը։ Բուրժուական որոշ գիտնականներ գըտնում են, որ կրոնը բնածին երևույթ է մարդու համար և որ այն միշտ գոյություն է ունեցել ո՞չ միայն մարդկային հասարակության մեջ, այլև կենդանական աշխարհում։ Այս անհեթեթ կարծիքը հակապատմական մի զառանցանք է, որին հակադրվում է մարդու զարգացման ամբողջ պատմությունը։

Կրոնական պատկերացումները կարող էին ձևավորվել միայն այն ժամանակ, երբ նախամարդը (կապիկը) իր մարդացման պրոցեսում սկսեց դուրս գալ կենդանական ստադիայից և երբ նրա ուղեղի մեծ կիսազնդերը հասան զարգացման այնպիսի աստիճանի, որ նա ընդունակ դարձավ ստեղծելու վերացական մտքի թեկուզ

և պարզեցրած ձևեր, պրիմիտիվ հայացքներ իրեն շրջապատող միջավայրի, բնության և իր նման էակների նկատմամբ, զարգացնելու արվեստը իր ամենանախնական ձևերով։

Այդ ժամանակաշրջանում հասարակական հարաբերությունները նույնպես պետք է կը եին որոշ փոփոխություններ, և նախնադարյան համայնքի կառուցվածքը պետք է ավելի բարդանար նախորդ շրջանների հետ համեմատած։

Ըստ ֆրանսիական գիտնական, կոմունիստ Շառլ Էշլենի, կրոնը ծագել է վերին պալեոլիթի շրջանում, որ կարող է հավանական լինել։

Այսպիսով, կրոնի զարգացումը կապված է եղել մարդկային մտքի որոշ աշխատանքի կամ այն պատկերացումների հետ, որոնց շի կարելի անմիջականորեն զգալ և ըմբռնել զգացողական օրգաններով։ Հնագույն դամբարաններում տնային գործածության իրերի, զենքի, ուտելիք պարունակող ամանների հայտնաբերումը վկայում է անդրշիրիմյան կյանքի նկատմամբ հին մարդկանց հավատի մասին։ Այսպիսի հավատը հատուկ է բոլոր կրոններին։ Շատ դեպքերում մարդու մահից հետո սպանում և նույն գերեզմանում թաղում էին նրա կնոջը և ծառաներին, որպեսզի նրանք մեռածին ուղեկցեն հանդերձյալ կյանքում։ Հասկանալի է, որ պատմական այդ ժամանակաշրջանում մարդկանց կրոնական պատկերացումները բավական պրիմիտիվ և շատ հեռու էին այն բարդ աստվածաբանական բովանդակությունից, որ ունեն այժմյան տարածված կրոնները։ Հին մարդկանց կրոնական գաղափարները սահմանափակվում էին անհիմիզմով՝ զանազան չար ոգիների հավատով, որոնցով աշխարհը լիքն էր համարվում, միստիկա-մոգական հայացքներով, ծայրահեղ նախապաշտումներով, մարդու և բնության վրա անդրկողմյան անհասկանալի ուժերի անսահման հզորության և իշխանության հավատով։

Կրոնի ծագումը պատմական կյանքի հնագույն ժամանակներում, նախնադարյան տոհմային հասարակության ժամանակաշրջանում, բացատրվում է նրանով, որ արտադրողական ուժերը չափազանց թույլ էին, մարդն անզոր էր ինքնօգնության միջոցներ գտնելու շրջապատող բնության իրեն սպառնացող հզոր տարերքների դեմ։ մարդու այդ անճարակությունը բնության՝ իրեն համար

անհասկանալի իշխող ուժերի հանդեպ, որոնք իբր թե մարդուն բերում էին զանազան տանջանքներ, հիվանդություններ, մահ, տարերային դժբախտություններ։ և այլն, նախնադարյան համայնքի մտավորապես ծայր աստիճան ցածր կանգնած վայրենու մոտ վախի զգացում էին առաջ բերում խորհրդավոր անդրկողմյան ուժերի նկատմամբ։ Այստեղից էլ ծագեց հավատը դեպի աստվածները, նրանց անսահման հզորությունը և մարդկանց վրա ունեցած իշխանությունը։ Այդ սնոտիապաշտական վախն էր, որը ստեղծեց աստվածներին։

Նախնադարյան կրոնի այդպիսի ծագումից պարզվում է, թե ինչպես պետք է բնորոշել կրոնի մասին հասկացողությունը։ Կրոնի պատկերացման հետ առնչություն ունեցող բոլոր հարցերը սերտորեն կապված են կրոնի էության բնորոշման և նրա բովանդակության մասին ստեղծված հասկացողության հետ։

Կրոնը իրենից ներկայացնում է իդեոլոգիայի հատուկ մի ձև, որը ֆանտաստիկ կերպով արտացոլում է մարդու հարաբերակցությունը արտաքին աշխարհի, շրջապատող բնության, մարդկանց փոխհարաբերությունների և փոխազդեցությունների միջև։

Կրոնը մեծ հավակնություն ունի բացատրելու այնպիսի հարցեր, ինչպիսիք են, օրինակ, աշխարհի կամ մարդու ծագումը և այլն։ Սակայն, ի տարբերություն գիտության, կրոնն այդ պատկերացումներն արտացոլում է ո՛չ թե իրական ձևերով, այլ փորձին ու պրակտիկային շենթարկվող կանոններով, երևակայությամբ և ֆանտաստիկայով ստեղծված սնոտիապաշտ, գերբնական պատկերացումներով։ «Ամեն մի կրոն ոչ այլ ինչ է,— ասում է Ֆ. Էնգելսը,— եթե ոչ այն արտաքին ուժերի ֆանտաստիկ արտացումը մարդկանց գլուխներում, որոնք իշխում են մարդկանց վրա, նրանց ամենօրյա կյանքում, մի արտացոլում, որի մեջ երկրային ուժերը վերերկրային ձև են ընդունում»<sup>1</sup>։

Այսպիսով, կրոնը բնութագրվում է որպես օբյեկտիվ իրականության աղավաղում, որպես իդեաների, երևութների ու փաստերի բոլորովին անձիշտ, անբնական ձևերով լուսաբանում։ Իսկա-

<sup>1</sup> Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Հայպետհրատ, 1952 թ., էջ 407։

պես, ծանոթանալով ամենատարածված կրոնների բովանդակությանը, որոնք ներկայացված են գրականության՝ աստվածաշնչի, ավետարանների, թալմուղի, ղուրանի մեջ, յուրաքանչյուր քայլափոխում կհանդիպենք իրական փաստերին և առողջ դատողությանը հակասող հակաբնական դրույթների, անհեթեթ հրաշքների, կյանքում երբեք շհանդիպող մտացածին դրությունների և այլն:

Մինչդեռ գիտությունը, որը նույնպես հանդիսանում է հասարակական գիտակցության ձևերից մեկը, զբաղվում է շրջապատող բնության կամ մարդկային հասարակության մեջ նկատվող փաստերի և երևույթների ուսումնասիրությամբ, որոնք միանգամայն ճշգրիտ ստուգման են ենթարկվում գիտական օբյեկտիվ մեթոդների օգնությամբ։ Գիտությունը հայտնաբերում է ուսումնասիրվող երևույթների փոխադարձ կապերը, հաստատում է այս կամ այն օրինաշափությունները։ Միևնույն ժամանակ գիտությունը բացարձակապես ժխտում է այն բոլոր տեսակի դրույթները, որոնք շեն հաստատվում օբյեկտիվ դիտողությամբ։

Ժամանակակից գիտությունը, իր այդ մեթոդոլոգիական հիմունքների սկզբունքային տարրերությունների պատճառով, սուր հակասությունների մեջ է գտնվում կրոնի հետ, որով և ժխտվում է շփման որևէ կետի առկայությունը գիտական մտքի ու կրոնական դոգմաների միջև։

Մարդկության պատմական կյանքի զարգացման ընթացքում, այս կամ այն հասարակական-տնտեսական ֆորմացիայի փոփոխության հետ մեկտեղ, փոխվում էին վերնաշենքային դրույթները, նայած արտադրական ու հասարակական հարաբերություններին, պատմական այս կամ այն ժամանակաշրջանի դասակարգային կառուցվածքին և մարդու կուտուրական զարգացման մակարդակին։ Այդ պատճառով նախնադարյան համայնական տոհմային հասարակության քայլայումից հետո դասակարգային ստրկատիրական հասարակարգում կրոնական պատկերացումները նոր արմատներ ունեցան, որոնք ելնում էին փոփոխված հասարակական նախադրյալներից։

Ստրկատիրության ժամանակաշրջանում իշխել սկսած շահագործող դասակարգը շնորհիվ կրոնի հզոր զենք գտավ շահագործ-

վող մասսաներին ճնշելու համար։ Ուստի նա շահագրգոված էր ամեն կերպ խրախուսելու կրոնը, որը քարոզում էր հնագանդություն և հրաժարում աշխարհի հզորների դեմ պայքարից։ Մյուս կողմից, իշխող դասակարգերի դեմ անօդնական մնացած շահագործվող մասսաները դիմում էին կրոնին, որը նրանց տանջանքների համար փոխհատուցում էր խոստանում եթե ո՞չ երկրային գոյության ընթացքում, գոնե անդրշիրիմյան կյանքում։ Այստեղից մենք տեսնում ենք, որ եթե անդասակարգ հասարակության մեջ կրոնը ծագեց և պահպանվեց մարդու անզորությամբ ու վախով անդրկողմյան ուժերի նկատմամբ, ապա ստրկատիրական հասարակության մեջ կրոնն արդեն ուներ սոցիալական արմատներ և նրա զարգացումը կապված էր որոշակի սոցիալական նախադըրյալների հետ։ «Շահագործողների դեմ մղած կովում շահագործվողների անզորությունը նույնպես անխուսափելիորեն հանդերձյալ լավագույն կյանքի հավատ է ծնում, ինչպես բնության դեմ մղած պայքարի մեջ վայրենու անզորությունն աստվածների, սատանաների, հրաշքների ու այլ բաների հավատ է ծնում»<sup>1</sup>։

Ո՞չ միայն հին, այլև բոլոր հետագա ժամանակներում կրոնը մեծացակցություն էր վայելում հասարակության շահագործող խավերի կողմից։ Դրա համար էլ անսահմանորեն ճիշտ էր Լենինը, երբ գրում էր, թե կրոնական պատկերացումները «անպետք հասարակարգի անպետք արտադրանքն են»։

Կրոնի և բժշկության միջև եղած փոխհարաբերությունները ստրկատիրական ժամանակաշրջանում ենթարկվեցին մեծ փոփոխությունների։ Մտածողության փոփոխման հետ մեկտեղ այդ ժամանակաշրջանում փոխվեց նաև կրոնական պատկերացումների բնույթը։ Սակայն շրջապատող բնության, կյանքի և նրա բազմաթիվ արտահայտությունների ու պրոցեսների մասին հնագույն մարդու ունեցած գիտելիքները շարունակում էին մնալ չափազանց ցածր մակարդակի վրա։ Այն հանգամանքը, որ մարդը գրեթե բոլորովին անզոր էր պայքարելու հիվանդությունների, մահվան և տարերք-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Սոցիալիզմը և կրոնը, Երկեր, Հատ. 10, Հայպետհրատ, Երևան, 1949 թ., էջ 92—93։

ների դեմ, հասցնում էր այնպիսի դրության, որ մարդը շարունակում էր այդ բոլոր դժբախտությունները վերագրել անդրկողմյան խորհրդավոր ուժերի ազդեցությանը:

Սակայն, բացի այդ հին անիմիզմի, այսինքն մարդուն շրջապատող այն բազմաթիվ շար էակների հավատի, որոնց նպատակն էր, կարծես թե, վնասել մարդուն, վերջինս սկսեց ճանաշել նաև ավելի բարձր աստվածային սկզբունք, որին ենթարկվում էին բոլոր այլ գերբնական ուժերը՝ դեերը, շար ոգիները և այլն:

Միևնույն ժամանակ պաշտամունքային հարցերը, որոնք հին կրոններում բավական քիչ տեղ էին գրավում, ստրկատիրական հասարակարգում ավելի բարդ արտահայտություններ ստացան: Համարյա բոլոր երկրներում պաշտամունքին վերաբերող խնդիրներն ամբողջովին անցան քուրմերի ձեռքը, որոնք, իբր թե, միջնորդներ էին հանդիսանում մարդու և բնության անդրկողմյան ուժերի միջև: Այս հանգամանքը նպաստեց քրմական կամ տաճարային այն բժշկության ծագմանը, որը սկսեց մեծ տեղ գրավել հին աշխարհում և որին վիճակվեց դառնալ միջնադարյան վանական բժշկության նախատիպը: Այդպիսով քրմերի ձեռքն անցան մարդու առողջության և բուժման խնդիրները:

Բացի քրմերից, հին աշխարհի երկրներում որպես բուժողներ հանդես էին գալիս զանազան մոգեր, վհուկներ, կախարդներ, հմայիչներ և այլն: Սակայն նրանց բոլորի մոտ էլ բժշկական գործը սերտորեն միահյուսվում էր սնոտիապաշտական և միստիկա-մոդական ձևերի, նույնիսկ ավելի, քան քրմական բժշկության մեջ. այնպես որ այդ ժամանակաշրջանում կրոնը մշտական և սերտ կապ ուներ բժշկության հետ:

Այսպիսով, ստրկատիրության ժամանակշրջանում բժշկությունը հին աշխարհի համարյա բոլոր երկրներում կարող է բնութագրվել որպես միստիկա-մոգական: Բացառություն էր կազմում միայն անտիկ հունա-հռոմեական աշխարհը. այնտեղ բանականությունը բավական շուտ մտավ իր իրավունքների մեջ, որի պատճառով բժշկությունը, սկսած հիպոկրատյան ժամանակներից, անցել էր հայեցողական-մետաֆիզիկական մեթոդոլոգիայի ուղիների վրա, իր բովանդակության մեջ ունենալով նաև տարրական էմպի-

րիկ ռացիոնալիզմի ձևեր: Այդ պատճառով բժշկությունն այստեղ ավելի վաղ շրջանում սկսեց ազատվել կրոնի ճնշման շրջանակներից:

Դրան համապատասխան՝ բժշկության զարգացման միստիկամոգական ստաղիայում հիվանդությունների ծագումը, կիրառվող բժշկական միջոցները, ձեռնածությունները և զանազան դեղանյութերը, ինչպես նաև հիգիենայի հարցերն ամբողջովին կապվում էին կրոնական պատկերացումների հետ: Այսպես, հիվանդությունների ծագումն սկսեց բացատրվել դևերի, շար ոգիների, կամ այլ անդրկողմյան էակների ազդեցությամբ, որոնք իբր հետապնդում էին մարդուն ամեն քայլափոխում և ջանում նրան որևէ վնաս հասցնելու հատ հին պատկերացումների, այդ խորհրդավոր ուժերը կարող էին մտնել մարդու մարմինը և այդ ձեռվ նրան պատճառել զանազան տառապանքներ: Հիվանդության մասին այսպիսի պատկերացման հիման վրա ծագեցին և բուժման համապատասխան եղանակներ, որոնք հանգում էին շար էակներին մարդու մարմնից դուրս քշելու միջոցներին:

Այդպիսի մեթոդներից էին՝ առողջությունը կամ հիվանդությունը հովանավորող աստվածներին աղոթելը, զանազան տիպի միստիկական ծիսակատարությունները, զոհաբերությունները և այլն, որոնց նպատակն էր շարժել անդրկողմյան ուժերի բարյացակամությունը և, այդպիսով, նրանց հեռացնել հիվանդի մարմնից: Այս նպատակով, շարի դեմ պայքարելու համար, քրմերը դիմում էին կախարդելու, շշնչալու, հմայական իրեր ու թալիսմաններ կրելու միջոցներին և այլն: Չար ոգիներին հեռացնելու նպատակով օգտագործվում էին նաև այլ միջոցներ՝ նրանց հասցեին սպառնալիքներ անելու, ճիշերի և ուժեղ աղմուկ առաջացնելու ձեվով, որոնք, իբր թե, պետք է վախեցնեին շար ոգիներին:

Քանի որ քրմերը հասկանում էին, որ միայն միստիկական մեթոդներով հնարավոր չէ ապահովել բուժման գործի հաջողությունը, ապա նրանք օգտագործում էին նաև հին էմպիրիկ բժշկությունից վերցրած դեղանյութեր: Սակայն, քրմերը այդպիսի բուժմանն էլ միստիկական բնույթ էին տալիս, գերադասելով հիվանդին նշանակել դառը և զզվելի համ ունեցող դեղանյութեր, որ-

պեսզի դրանով իսկ զզվանք առաջացնեն օրգանիզմի խորքերում տեղավորված շար ոգիներին և ստիպեն նրանց հեռանալ հիվանդի մարմնից: Քրմերը ճիշտ նույն բնույթն էին տալիս նաև բուժման այլ մեթոդներին, այն է՝ մասամբին, բախումներին, կտրումներին, արյան առմանը և այլն, որոնց նպատակը, իբր թե, շար ոգիներին անհանգստություն պատճառելը և դրանով հիվանդի մարմնից նըրանց հեռացնելն էր:

Հնագույն մի շարք ժողովուրդների պանթեոնում, որոնց մոտ կրոնը ավելի զարգացած ձև էր ընդունել, հանդես էին գալիս բժշկության աստվածներ ու աստվածուհիներ, առողջության կամ հիվանդությունից պաշտպանող աստվածներ, հղի կանանց հովանավորողներ և այլն:

Այդպիսիք էին, օրինակ, հայերի մոտ՝ Անահիտը և Աստղիկը, սեմիտների ու իրանացիների մոտ՝ Անախտան, ուրարտացիների մոտ՝ Իրմուզինին ու Կուտուփինին, ասորա-բաբելոնացիների մոտ՝ Իշտարը, Եգիպտացիների մոտ՝ Իզիդան ու Նիտը, Հույների մոտ՝ Ասկլեպիոսը կամ Էսկոլապը, Արտեմիդան ու Հիպիեյան (որտեղից և առաջացել է հիգիենա բառը) և այլն:

Մի շարք աստվածների վերագրվում էին հատուկ ֆունկցիաներ. ինչպես, օրինակ, Հովանավորություն որոշ հիվանդությունների նկատմամբ, կամ, ընդհակառակը, զանազան ծանր հիվանդությունների առաջացնելը: Այդպես էին ժանտախտի համաճարակներ առաջացնող աստված Ներգալը Առաջավոր Ասիայի երկրներում, տենդի աստվածուհին (febris dea) Հոռմայեցիների մոտ և այլն:

Այսպիսով, մարդը փորձում էր անդրկողմյան աշխարհում գտնել հովանավորողներ, որոնք դժբախտության դեպքում կարող էին նրան այս կամ այն օգնություն հասցնել. այդպիսիների հետ մարդը կապեր էր պահպանում համապատասխան պաշտամունքի քրմերի ծիսական խորհուրդներով:

Հին բժիշկներն զբաղվում էին նաև խիրուրգիայով, որը նույնպես որոշ շափով կապվում էր կրոնական պատկերացումների հետ: Այսպես, օրինակ, միստիկա-մողական բժշկության տարածման ժամանակաշրջանում զանազան երկրների խիրուրգները կրոնական

նպատակներով կատարում էին մալում, ծիսական թլփատումներ, նույնիսկ այնպիսի համարձակ օպերացիա, ինչպիսին է գանգի տրեպանացիան։ Այս օպերացիան կատարում էին գլխի հիվանդությունների ժամանակ (վերնոտություն, գլխի ցավեր և այլն), երբ ենթադրվում էր, որ հիվանդություն առաջացնող ողին թափանցել է դանդի խորքը, ուստի և, օպերատորի կարծիքով, հարկավոր էր հնարավորություն տալ շար ոգուն տրեպանացված անցքի միջոցով դուրս դալու դանդի խոռոշից։

Հին բժշկության մեջ կարելի է հանդիպել նաև առողջապահական շատ պատվերների, որոնք նույնպես կապվում էին կրոնական պահանջների հետ և կրում էին միստիկական երանգավորում։ Դրանցից մի քանիսը հասել են մինչև մեր օրերը, ինչպես օրինակ, շարթական պառ պահելու սովորությունները և այլն։

Քրմական բժշկության մեթոդները և կիրառական ձևերը վերածվեցին նույնիսկ առանձին սիստեմների. այդպես էին ողեհմայական բժշկությունը հրեաների մոտ, քաղղեական դեմոնիզմը, կարալիստական կամ գաղտնիագիտական բժշկությունը, երբ ամեն մի բժշկական գործողության դեպքում արտասանվում էին ոչ մի իմաստ շունեցող մի շարք բառեր, և այլն։ Այս բոլորը յուրահատուկ անիմաստ մի փիլիսոփայություն էր, որտեղ հիմնական տեղը գոավում էին սնոտիապաշտությունը, միստիցիզմը և հրաշքները։ Այդ պատճառով որոշ տեսանկյունով միստիկա-մոգական բժշկությունը նույնիսկ ավելի ցածր էր կանգնած, քան բժշկությունը հին նախնական էմպիրիզմի ժամանակաշրջանում։

Այդ միստիկա-մոգական բոլոր պատկերացումները զարմանալի կերպով կենսունակ գտնվեցին։ Քրիստոնեության ծագումից հետո հին միստիկական հավատալիքները որոշ շափով պահպանվեցին նոր կրոնի մեջ, ընդունելով միայն քրիստոնեացած տեսք։ Սովորաբ մարդիկ հեշտությամբ չէին բաժանվում իրենց կրոնական սովորույթներից, ուստի զարմանալի չէ, որ հին կրոնական պատրանքները պահպում էին կրոնական հավատալիքների փոփոխումից հետո։ Հարցին վերաբերող այլևայլ օրինակներից կարող ենք բերել հայերի մոտ դեռ հեթանոսական ժամանակներից տարօինակ կերպով պահպանված զոհաբերության սովորույթը, որը լիովին բացակայում է այլ դավանանքի քրիստոնյաների մոտ։

Կրոնական հավատալիքների և նրանց հետ կապված նախապաշարմունքների ու միստիկական պատկերացումների վերաբերյալ հարցերին մոտիկից ծանոթանալու դեպքում պարզվում է, որ քրիստոնեության և այլ մեծ կրոնների տարածմամբ ձևափոխվել են միայն կրոնական պաշտամունքի ու ծիսակատարությունների արտաքին ձևերը, իսկ կրոնական հիմունքների և դոգմատիկայի էռթյունը մնացել է առանց հիմնական փոփոխությունների:

Չար ոգիները, կրոնական միստիկան և սնոտիապաշտական պատկերացումները կրոնի բթացնող ազդեցության տակ գտնվող ժողովուրդների կենցաղում շարունակում են գրավել իրենց դարավոր տեղը: Հիվանդությունները բուժելու գործում հաճախ հույս են դնում մարդկային հասկացողությունից դուրս գտնվող զանազան հրաշքների վրա, որոնք մեծ տեղ էին գրավում նոր կտակարանում բերված բժշկության դեպքերի մեջ: Քրիստոսը, ըստ կրոնական ավանդության, մարդկանց մարմնից հիվանդությունները հեռացնում էր միայն իր խոսքով: Այդ պատճառով հիվանդությունների բուժման գործում մեծ տեղ էին գրավում աղոթքները, միստիկական հնարանքները՝ քրիստոնեական վերահմաստավորմամբ, սուրբ ջրի գործածությունը, սրբավայրեր հաճախելը և այլն:

Ժամանակակից ազգագրությունը բավական թվով օրինակներ է պարունակում այն մասին, որ հին միստիկա-մոգական ոլոտիերացումները մինչև օրս էլ իրենց արխայիկ ձևերը պահպանել են զանազան երկրներում, շնայած որ անցյալում կրոնի և բժշկության փոխհարաբերությունների մեջ առաջացել էին էական շատ փոփոխություններ:

Հնում, միստիկա-մոգական ստաղիայում, ինչպես արդեն նշեցինք, բժշկությունն ամբողջապես գտնվում էր քրմական դասի ներկայացուցիչների իրավասության տակ:

Միջին դարերում, ֆեոդալական հասարակական հարաբերությունների զարգացմամբ, բժշկությունը դարձավ գիտության աշխարհիկ բնագավառ և անցավ պրոֆեսիոնալ բժիշկների ձեռքը, որոնցից լավագույնները շարունակում էին զարգացնել անտիկ կլասիկների փայլուն տրադիցիաները:

Գիտական ուսմունքները որոշ շափով ազատագրվեցին կրոնի

բռնապետական իշխանությունից, որով բնութագրվում էր միստիկա-մոգական դարաշրջանի բժշկությունը։ Կրօնական միստիկան արդեն ավելի փոքր չափով էր ճնշում և հսկում գիտական մտքի վրա, մի հանգամանք, որը հեռանկար էր բաց անում գիտության զարդացման և առաջաղիմության համար։ Երևան եկան բժշկական դպրոցներ, որոնցից մի քանիսը, ինչպես, օրինակ, Սալերնոյի դպրոցը, դարձան խոշոր գիտական կենտրոններ և թարմ հոսանք մտցրին բժշկական գիտության բնագավառը։ Մեթոդոլոգիայի տեսակետից բժշկությունը վերափոխվեց հայեցողա-մետաֆիզիկական ուղիների վրա, բովանդակելով էմպիրիկ ռացիոնալիզմի տարրեր, որը նշանակալի չափով նպաստում էր բժշկական գիտությանը՝ զարգանալու ավելի ճիշտ ուղիներով։

Միջնադարյան բժշկության հայեցողա-մետաֆիզիկական ուղղվածությունը, այդ մեթոդոլոգիայի ամբողջ խոցելիությամբ հանդերձ, ավելի առաջավոր էր և ավելի քիչ էր կախված հին բժշկության ամբողջովին իդեալիստական, միստիկա-մոգական հիմունքներից։

Այդպիսի մեթոդոլոգիայի բազայի վրա հիվանդությունների ծագումը արդեն սկսեց բացատրվել ո՛չ թե անդրկողմյան ուժերի միջամտությամբ, այլ բնական պատճառներով, նյութական կարգի երևոյթներով, կյանքի պայմաններով և այլն։ Համապատասխանաբար փոխվեցին նաև հայացքները բուժման հարցերի վերաբերյալ։ Հնարավորություն ձեռք բերվեց տեսական շատ հարցերի մշակման և գիտական ընդհանրացումների համար։

Սակայն, շնայած միջնադարյան գիտության զարգացման ավելի դրական ուղիներին, նա մեծ չափով կազմված էր վերացական մտահայեցողական պատկերացումների վրա, հեռու լինելով այն ամենից, ինչ որ կարող էին տալ կյանքի պրակտիկան, փորձը և դիտողությունը։ Կյանքի երևոյթների մասին ուսմունքը ամբողջովին իդեալիստական բնույթ էր կրում և արտացոլում էր այն ժամանակվա գիտության մեջ իշխող՝ մտածողության մետաֆիզիկական մեթոդը։ Բժշկական գիտության բովանդակությունը սերտորեն կապվում էր կրօնական դոգմաների և արիստոտելյան փիլիսոփայության ամենաթույլ կողմերի հետ։

Բժշկությունը այդ ժամանակաշրջանում դուրս եկավ կրոնական դասերի անմիջական տնօրինությունից. սակայն կրոնի ճնշումը դիտական մտքի վրա շարունակում էր զգացվել բավական մեծ շափերով:

Ֆեոդալիզմի դարաշրջանը ղեռ շատ հեռու էր գտնվում այն ժամանակներից, երբ տեղի ունեցան դասակարգային առաջին մարտերը ոչ արտոնյալ խավերի ազատագրման համար, որոնք նշանակալի շափով ազատեցին նաև գիտական միտքը կրոնի կապանքներից:

Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ միջնադարյան գիտությունը, չնայած իր զարգացման նոր ուղիներին ու մեթոդներին, այնուամենայնիվ մնաց կրոնի գերին և շատ քիչ բարձրացավ այն մակարդակից, որի վրա նրան թողել էր հելլենական անտիկ հանճարը:

Միայն ֆեոդալիզմի թուլացման, եկեղեցու հզորության անկման և իր ժամանակին պրոգրեսիվ կապիտալիզմի զարգացման շնորհիվ բժշկական գիտությունը կարողացավ աստիճանաբար ազատագրվել կրոնի բռնապետական հովանավորությունից և կանգնել զարգացման փորձնական ուղիների վրա: Ստորև բերված մի քանի օրինակները կարող են ապացուցել կրոնի արգելակող ազդեցությունը բժշկական մտքի և բժշկական գիտելիքների զարգացման վրա:

Ֆեոդալիզմի օրով որպես հիվանդների բուժմամբ և առհասարակ բժշկական հարցերով զբաղվող կենտրոններ մեծ ղեր սկսեցին խաղալ վանքերը: Այսպիսով, հին տաճարային բժշկությանը փոխարինեց միջնադարյան միստիցիզմից ծնված վանական բժշկությունը: Շատ վանքերի իշեատներ այդ ժամանակներում դադան ուխտավայրեր, ուր ղիմում էին հիվանդները, հույս ունենալով, որ այնտեղ կրուժվեն իրենց ցավերից:

Այդպիսի ղորություն գոյություն ուներ ի միջի այլոց նաև մեզ մոտ՝ Հայաստանում: Սևանի վանքը դարձավ հոգեկան հիվանդների ապաստարան, որանով իսկ վերածվելով բուժական հիմնարկի՝ այդ կատեգորիայի հիվանդների համար:

Կրոնական իշխանության որոշմամբ բոլոր կարգի և աստիճանի կաթոլիկ հոգևորականությունը ամուսնանալու, ընտանիք և

Երեխաներ ունենալու իրավունքից վրկած էր։ Այդ որոշումը առանձնապես խիստ կերպով սկսեց իրագործվել XI դարի վերջերից, Հոռմի պապ Գրիգոր VII-ի հայտարարած ոեֆորմից հետո։ Վերջինիս ձեւական նպատակն էր՝ հոգևորականների մեջ բարձրացնել բարոյապաշտության սկզբունքները։ Բայց փաստորեն այդ «բարենորոգության» իսկական աստանն էր՝ ազատել կրոնավորներին աշխարհիկ իշխանության աղղեցությունից և ամրացնել եկեղեցու գույքային ու նյութական հիմքերը։

Այս որոշումը տարածվել էր նաև բժիշկների մեջ, որոնց վրա նայում էին որպես հոգևորականությանը մոտ կանգնած մարդկանց, Բժիշկները կաթոլիկական երկրներում կոչվում էին եկեղեցական սպասավորներ (des clercs), կամ կանոնիկոսներ (այսինքն՝ քահանաներ, des chanoines)։ Միայն 1482 թվականին կարդինալ դ'Էստուտվիլը վերացրեց հիշյալ որոշումը բժիշկների նկատմամբ։ Այն ժամանակաշրջանում կաթոլիկ հոգևորականության նույնիսկ հագուստը համարյա թե ոչ մի բանով չէր տարբերվում բժիշկների հագուստից։

Կրոնական իշխանությունը շատ դաժան կերպով էր հալածում իր թշնամիներին։ Այսպես, հայտնի բժիշկ Միգուել Սերվետը (1509—1553), որը դեռ Հարվեյից առաջ նկարագրել էր մարդու մոտ արյան փոքր շրջանառությունը, զրկվեց կյանքից կրոնական դոգմաների դեմ իր կոնցեպցիաների հակասությունների պատճառով, Կալվինի կարգադրությամբ Սերվետը ողջ-ողջ խարույկի բարձրացվեց ժննում։ Հայտնի բելգիական բժիշկ և բնագետ Վան-Հելմոնտը (1577—1644), որը իր հսկայական գիտունության համար կոչվում էր «17-րդ դարի Ֆառար», երկար ժամանակ բանտարկված էր իր համարձակության պատճառով։ Նա բացասական կարծիք էր հայտնել կրոնի բուժիչ մասին՝ համեմատած բժշկական միջոցների հետ։

Հին խոշորագույն անատոմ Վեգալիուսը (1514—1564) եկեղեցական իշխանների կողմից ենթարկվել էր շատ դաժան ու տեսական հալածանքների։ Դրա հետևանքով նա ստիպված եղավ հրաժարվել գիտական հարցերով զբաղվելուց։ Նրա ամբողջ մեղքն այն էր, որ դիահերձական տվյալների վրա հենվելով, նա հայտարարել

էր, որ տղամարդիկ և կանայք հավասարապես ունեն 24 կող. մինչդեռ, ըստ աստվածաշնչի ավանդության, աստված ստեղծել էր Եվային Աղամի կողից, հետևապես, գիտուն աստվածաբանների կարծիքով, տղամարդը այդ հաշվով պետք է ունենար ոչ թե 24, այլ 23 կող միայն:

Միջին դարերում բժիշկները տվել են մեծ թվով նահատակներ, որոնք, հանուն պրոգրեսիվ գաղափարների, չէին վախենում զոհել իրենց կյանքը կամ դիրքը, ընկնելով կաթոլիկ եկեղեցու այնպիսի արյունուղտ և խայտառակ հնարագիտության մամլակների տակ, ինչպես էր «սրբագույն ինկվիզիցան»:

Կրոնական ավանդությունը առասպել էր տարածում Մարիամ աստվածածնի անարատ բեղմնավորման մասին, որի հետևանքով իբր թե ծնվեց Քրիստոսը:

Այդ առասպելի հիման վրա հնարավոր էր համարվում բիոլոգիական ու բժշկության օրենքներին, ինչպես և առհասարակ առողջ դատողությանը բացարձակապես հակասող մի դրույթ՝ բեղմնավորություն առանց արական սերմի, սուրբ հոգու աղդեցությունից: Այս անհեթեթությունը եկեղեցականները հնարել էին, որովհետև եկեղեցին բեղմնավորությունը և մանկածնությունը ճանաշում էր որպես մեղսական գործողություն, իսկ մեղադրել աստվածամորը այդ մեղքի մեջ շատ մեծ և ամոթալի գործ կլիներ:

Ծննդյան ցավերը, ինչպես հայտնի է բժշկությունից, բիոլոգիական բարդ պրոցեսի հետևանք են, այն է՝ երբ ծնվող էակը անցնում է իր շափերին ոչ բոլորովին համապատասխանող ծնընդյան ուղիներով: Կրոնը այդ ցավերը բացատրել է աստծո անեծքով, երբ առաջին մարդիկ, նրա պատվերը շկատարելու համար, արտաքսված էին դրախտից: Այս անեծքի հետևանքները արդի բժշկությունը լիովին վերացրել է՝ կինը կարող է բուժիլ միջոցներով աղատվել ծննդյան ցավերից:

Միջին դարերում աստվածաբանները լուրջ վեճեր էին ունենում այն մասին, թե կարո՞ղ էր արդյոք առաջին մարդը՝ Աղամը պորտ ունենալ. քանի որ նա կնոջից չէր ծնվել, հետևասլես կարիք չէր կարող ունենալ արյան ներարգանդային շրջանառության, որի հետ կապված է պորտալարի գոյությունը:

Նման անհեթեթությունները ունեին այն հետևանքը, որ Հռոմի պապ Գրիգոր IX-ն 1231 թ. արգելեց աշխարհականներին նույնիսկ աստվածաշնչի ընթերցումը, վախենալով, որ այդ գրքում եղած անհեթեթությունները կարող են հերետիկոսության տարածման առիթ ծառայել: Նույն նշանակությունն ուներ նաև կաթոլիկ եկեղեցիներում ժամասացությունը լատիներեն լեզվով կատարելը, որը անհասկանալի էր մնում ժողովրդական մասսաներին:

Միջին դարերում, երբ կրոնը գերիշխում էր գիտության վրա, բժշկության մեջ մտան կրոնական պատկերացումների հետ սերտորեն կապված բավական մեծ թվով տերմիններ, Բժշկությամբ դրաղվող մարդկանց այժմ էլ զարմացնում է այն հանգամանքը, թե որքան շատ են այժմյան բժշկության մեջ գոյություն ունեցող, կրոնական հասկացողությամբ կազմված հնաբանական տերմինները:

Այսպես, օրինակ, տղամարդկանց վահանաձև աճառի վերին ժասում լավ երևում է մի ելուն, որը կոչվում է աղամախնձոր: Այս տերմինի ծագումը կապ ունի մարդու նախնական մեղքի մասին աստվածաշնչի ավանդության հետ: Ըստ այդ ավանդության, երբ Աղամը սկսեց ուտել ծառի արգելված պտուղը, անսպասելի կերպով նրան ձայն տվեց աստվածը: Հանկարծակի բոնվելով, Աղամը շկարողացավ կլանել պտուղը և վերջինս մնաց նրա կոկորդում, որի պատճառով էլ իբր թե գոյացավ այդ ելունը: Աղամի շարագործությունը մարդկանց հիշողության մեջ հավերժացնելու համար, ըստ կրոնական ավանդության, բոլոր տղամարդիկ ընդմիշտ պետք է այդ նշանը կրեն (Կարուղին):

Բազմաթիվ այլ տերմիններից կարելի է այստեղ նշել նաև հետեւյալները.

Սատանայի կծվածք (morsus diaboli), հնացած անատոմիական մի տերմին է, որը գործ է ածվում արգանդափողի ծոփը անվանելու համար: Այդ փողի անհարթությունները առիթ տվեցին հարմարեցնել այստեղ զուտ բուսաբանական տերմին՝ մի բույսի հետ (Scabiosa succita) արտաքին նմանությամբ, որին իբր թե սատանան կծել է. ըստ ավանդության, այդ ձեռվ սատանան ուզեցել է լինասել մարդկանց, որոնք այդ բույսը գործ էին ածում բուժիչ նպատակներով:

Սաղմոս կամ Դավրի քնար, աստվածաշնչից հայտնի հրեական թագավորի անունից կազմած անատոմիական տերմին է, որը գործ է ածվում ուղեղի կամարի ետին ոտիկների միջև եղած տարածության համար, քնարի հետ նրա նմանության պատճառով (թեպետև շատ հեռավոր):

Սուրբ կամ հրաշալի հիվանդուրյուն, morbus sacer s. divinus, որ նշանակում է վերնոտություն, ընկնավորություն. այդ հիվանդությունից տառապողները իրոք թե դիվահարներ են:

Սուրբ վիտյան պար (կամ խորեա) տերմինը գործ է ածվում որպես մի հիվանդության անուն, որի ժամանակ նկատվում են մկանների ոչ կամայական ցնցումներ: Միջին դարերում սուրբ Վիտը համարվում էր այդ հիվանդությունից պաշտպանող:

Անտոնյան հուր կամ սուրբ Անտոնի հուր. այս տերմինը նշանակում է կերցավ կամ դանդրենա, որ առաջանում է եղջրասնկով թունավորումից:

Մենք բավականանում ենք բերված օրինակներով, որոնք վկայում են բժշկական գիտության վրա կրոնի ձնշման մասին, չնայած այդ գիտության նյութական հիմքերին:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ ֆեոդալիզմի դարաշրջանում բժշկությունը անցնում է հռւնա-հռոմեական կլասիկ կուտուրայից ժառանգված հայեցական մետաֆիզիկական հիմունքների վրա: Այդ ժամանակաշրջանի բժշկությունը կարելի է ավելի շուտ բնութագրել որպես արվեստ, քան թե գիտություն: Միջնադարյան բժշկությունը թեպետ կորցրել էր իր անմիջական կապը միստիկամոգական հավատալիքների հետ, բայց և այնպես նա դեռ շարունակում էր գտնվել կրոնի խիստ ազդեցության տակ, որը միջին դարերում իր մամլակներում պահում էր մարդկային գիտելիքների բոլոր ճյուղերը:

Բժշկությունը իսկական գիտության վերափոխվեց միայն վերածնությունից հետո, երբ պատմական ասպարեզ իշնող այն ժամանակաշրջանում դեռևս ունվագիոն, բուրժուական դասակարգը նոր և շատ ավելի բարձր պահանջներ էր դնում գիտության առջև, ծառայեցնելով նրան իր շահերին ու նպատակներին:

Բժշկությունը անցնում է ինդուկտիվ, գործնական մեթոդների

Ա ՀԱՅ ՔԱՆ

Հիմունքների վրա, մի բան, որը մեծապես նպաստել է այդ գիտության հետագա զարգացման առաջադեմ ընթացքին։ Բժշկության և բնագիտության նոր ժամանակների հաջողությունները հիմնականում պայմանավորված են այդ գիտությունների առաջադեմ մեթոդովի և վճռողական մերժումով հայեցական ճանապարհներից գիտական որոնումների մեջ։ Ինդուկտիվ ուղղությունը գիտության մեջ սկզբունքորեն միանգամայն հակառակ էր փորձնական ուղիներով ո՛չ ապացուցելի կրոնական դոկտրինաներին։

Դրանով է բացատրվում աթեիստական հայացքների այն տարածումը վերածնության դարաշրջանից հետո, որը իր բարձրագույն աստիճանին է հասնում 17-րդ դարի անգլիական ականավոր մատերիալիստների՝ Ֆր. Բեկոնի և Թ. Գոբսի աշխատություններում, 18-րդ դարի ֆրանսիական մեխանիստական մատերիալիստների մի շարք ներկայացուցիչների մոտ, ինչպիսիք էին Վոլտերը, Ժելվեցիուսը, Ժոլբախը և ուրիշներ։ Վերջապես, 19-րդ դարում մատերիալիստական միտքը փայլուն ներկայացուցիչներ ունեցավ նաև Ռուսաստանում։ սրանց թվումն էին ուսուցիոն-դեմոկրատներ Վ. Գ. Բելինսկին, Ն. Գ. Զերնիշևսկին, Ն. Ա. Դոբրոլյուբովը, Դ. Ի. Պիսարելը և ուրիշներ։

Սակայն, շնայած աթեիզմի զարգացմանը կապիտալիստական երկրներում, բուրժուական գիտությունը մինչև այժմ էլ դեռ վերջնականապես չի հրաժարվում կրոնից։ Քարոզելով իշխող դասակարգերի հանդեպ խոնարհություն և հնագանդություն հանուն անդրշիրմյան կյանքի բարիքների, կրոնը հնարավորություն է ըստեղծում հնագանդության մեջ պահելու կապիտալի ճնշման տակ գտնվող աշխատավորների լայն մասսաներին։ Քանի որ կրոնական իշխանները, ֆեոդալիզմի քայլայումից և կապիտալիստական ֆորմացիայի հաղթանակից հետո, մեծ հոժարությամբ սկսեցին ծառայել նաև բուրժուազիային, ապա վերջինս չէր կարող այնքան միամիտ լինել, որպեսզի հրաժարվի դասակարգային պայքարում ձեռնտու դաշնակից ունենալու օգտից։ կրոնի սպասավորները բոլոր ժամանակներում աշխատում էին ամրապնդել և ուժեղացնել շահագործողների իշխանությունը։

Դրանով է բացատրվում նաև այն, որ բուրժուական աթեիզմը

շէր կարող մինչև վերջ խիստ հետևողական մնալ իր գաղափարական դիրքերում. երբ բուրժուազիայի դասակարգային շահերը այդպահանջում էին, նա հոժարությամբ հենվում էր կրոնական գաղափարների վրա:

Վերջապես, սոցիալիզմը կառուցող նրկուամ բժշկականությունը, հաղթահարելով ինդուկտիվ մեթոդի թերի և թույլ կողմերը, անցնում է գիտության զարգացման համար լայն հորիզոններ բացող մատերիալիստական դիալեկտիկայի գրանիտյա հիմունքներին. Այս մեթոդական բազան, որը հսկայական զենք է դարձել կրոնի դեմ պայքարելու գործում, ամենաարգասավոր հնարավորություններ և լայն մտահորիզոններ է բաց անում գիտական միտքը նոր ուղիներով զարգանալու համար:

Այստեղից մենք կարող ենք կրոնի ու բժշկության փոխհարաբերությունը պատմական հեռանկարի տեսանկյունից պատկերացնել հետեւյալ կերպ: Բժշկությունը և կրոնը ծագեցին սկզբում մեկը մյուսից բոլորովին անկախ հիմունքների վրա. ավելի ուշ ժամանակաշրջանում հասարակական գիտակցության այս երկու միանգամայն տարբեր ձևերը իրենցից ներկայացնում են միանման իդեոլոգիայի առանձին բաժիններ: Այդ ժամանակաշրջանում բուժող անձնավորությունների թեորետիկ պատկերացումները և գործնական աշխատանքները, որոնք հիմք էին ստեղծում քրմական բժշկության համար, ամբողջովին անցնում են պաշտամունքի սպասավորների տնօրինության տակ, կազմելով կրոնի անբաժան մասը: Հետագայում բժշկությունը դառնում է աշխարհիկ գիտություն և անցնում է պրոֆեսիոնալ բժիշկների ձեռքը, թեպետ իր գործողություններում և գաղափարական դիրքերում նա շարունակում է մնալ կրոնական իշխանության ուժեղ հսկողության տակ: Վերջապես, բժշկությունը վերափոխվում է մի գիտության, որը լիովին կտըրվում է կրոնական հիմունքներից և հենվում է մատերիալիստական գիրքերի վրա. և եթե այն երկրներում, որտեղ կրոնը այժմ էլ շարունակում է իշխել մարդկանց հասարակական գիտակցության վրա, բժշկությունը դեռ պահպանում է իր կապը իդեալիստական փիլիսոփայության հետ, այդ բխում է ո՛չ թե բժշկական գիտության էությունից, այլ միայն իշխող դասակարգի քաղաքական շա-

Հերից: Կապիտալիստական դասակարգը չի կարող հրաժարվել իր հնարավորությունների սահմաններում գտնվող պայքարի միջոցներից, քանի որ խոսքը նրա դասակարգային արտօնությունների պահպանման մասին է, որոնցից նա չի ցանկանա հոժարակամ դրկվել:

Այստեղից կարելի է եղրակացնել, որ կապիտալիստական երկրոներում ժամանակակից գիտությունը ազատ չի կրոնական իդեոլոգիայի ազդեցությունից, չնայած գիտությունների զարգացման փորձնական և հիմնականում մատերիալիստական մեթոդուղիային:

Բնության ճանաչման ուղիները որոնող գիտության նպատակն է, առաջին հերթին, ուսումնասիրել այն օրենքները, որոնց վրա հենվում է բնության մեջ կենդանի կյանքը: Մատերիալիզմը և նրա արմատները դրված են բնության բոլոր երևույթների հիմքում, ուստի զարգացման ամեն մի երևույթ առաջին հերթին բնության օրենքներին խիստ համապատասխան դիալեկտիկական պրոցես է: Այստեղից հասկանալի է, որ հայրենական բիոլոգների խոշորագույն ներկայացուցիչները՝ Կ. Ա. Տիմիրյազելը, Ի. Վ. Միշուրինը, Ի. Ի. Սեղենովը, Ի. Պ. Պավլովը և այլն, կանգնած լինելով գիտական ամենապրոգրեսիվ մեթեդոլոգիայի՝ մատերիալիստական դիալեկտիկայի դիրքերի վրա, կարողացան հասնել հսկայական հաջողությունների՝ ամեն մեկը իր բնագավառում:

Ամեն մի գիտություն, որը հենվում է մատերիալիստական դիալեկտիկայի օրենքների վրա, ամբողջովին հակասում է բնության երևույթների իդեալիստական մեկնաբանմանը, հետևապես նաև ամեն մի կրոնական գաղափարի: Բուրժուական երկրների գիտնականները, որոնք շեն հրաժարվում կրոնից, կանգնած են մետաֆիզիկական ու իդեալիստական դիրքերի վրա և աղավաղելով գիտության տվյալները, պաշտպանում են կյանքից և պրակտիկայից. շատ հեռու գտնվող զանազան հակազիտական դրույթներ:

Այսպես, օրինակ, հայտնի բիոլոգ Ա. Վեյսմանը հորինեց մի միստիկական թեորիա, ըստ որի սաղմնային պլազման կամ սուրստանցիան, որը գտնվում է սեռական տարրերում և իբր թե պայ-

մանավորում, է ժառանգականության բոլոր արտահայտությունները, անմահ է իր բնույթով, ի տարբերություն ամբողջ մնացած մահկանացու մարմնի: Անցնելով մեկ սերնդից մյուսը, սաղմնային սուբստանցիան ըստ այդ արատավոր թեորիայի, չի ենթարկվում, ոչ մի փոփոխության, երբեք նորից չի գոյանում և չի սպառվում մնալով և պահպանվելով հավիտենապես: Այսպիսով, այդ սուբստանցիայի հավերժական գոյությունը մարմնի հետ չի կապված, չի ենթարկվում ոչ մի զարգացման և էվոլյուցիայի, հետեւապես մնում է ընդմիշտ անփոփոխ: Ամեն մի նոր սերունդ, ըստ այդ կոնցեպցիայի, չի կարող լինել նախորդների հետեւանք: Այդ տեսակետը հանգում է մի շատ տարօրինակ եզրակացության, որ ծնողներն իրենց զավակների ծնողները չեն, այլ նրանց քույրերը կամ եղբայրներն են, նաև մարդկանց նախնիքները փաստորեն իրենց սերունդների նախնիքները չեն, քանի որ այդ սուբստանցիան հավերժական է և անփոփոխ:

Այս անհեթեթ թեորիան, լինելով իր էությամբ իդեալիստական և հակաէվոլյուցիոն, այնուամենայնիվ ընդունվում է բուրժուական երկրների գիտնականների կողմից, որովհետև նա, ժըխտելով էվոլյուցիան, հանգում է այն եզրակացության, որ ժառանգական սուբստանցիան զարգացման հետեւանք չէ, այլ եղել է ըստեղծված, հետեւապես արարշի գործողությունից է ծագել: Այդ հիման վրա Վեյսմանը ասում է, որ այդ թեորիան ազատ ասպարեղ է թողնում հավատի համար: «Այս եզրակացությունը, — ավելացնում է Վեյսմանը, — անբարենպաստ է սոցիալիստական ձգտումների համար»:

Ահա թե ի՞նչ նպատակների է ծառայում Վեյսմանի թեորիան, որի կեղծ գիտական իմաստը ուղղակի տանում է դեպի կրոնական միստիկան, ավելի քան պարզ է, որ նա ամբողջովին հակասում է այժմյան գիտական տվյալներին և գիտական տրամաբանական մտքին:

Բուրժուական գիտությունն ստեղծում է կրոնական դոգմաներին հարմարվող թերոիաներ, բոլորովին հոգ շտանելով ճշմարտության մասին կամ այդ թեորիաների համապատասխանությանը գիտական անհերքելի փաստական տվյալներին:

Մի ուրիշ բուրժուական «գիտնական» Վեդը, Վեյսմանի միտքը շարունակելով, մեծ ապլոմբով հայտարարում է, որ «հասարակական պայքարի մեջ հաղթությանը հասնում են ո՞չ թե մարդկացին բանականության ուժով, այլ կրոնի զարգացումով»։ Այսպիսով, բուրժուական երկրների գիտնականները վերադառնում են միջնադարյան դրույթներին, ըստ որոնց գիտությունը պետք է ենթարկվի կրոնին, պետք է դառնա, ինչպես այն ժամանակ արտահայտվում էին, նրա աղախինը։

Այստեղից հասկանալի են դառնում այդպիսի իդեոլոգիական ուղղվածությունից բխող զանազան թեորետիկ և գործնական դրույթները։

Մենք արդեն ասացինք, որ Ֆրանսիայում ամեն տարի Լուրդի աղբյուրների շրջանն են մեկնում տասնյակ հազարավոր հավատացյալներ, հուսալով, որ այնտեղ իրենց տառապանքներից կբժըշկվեն կրոնա-միստիկական ձևերով։ Պետք է նկատի ունենալ, որ Լուրդը կաթոլիկ եկեղեցու համար դրամական շահույթի խոշորագույն աղբյուրներից մեկն է։

Ի՞նչպես շասել, որ Լուրդում բժշկական գիտությունն իշեցված է մինչև կրոնի աղախինի դրությունը։

Պայմանական ոեֆլեքսների մասին ի. Պ. Պավլովի հանճարեղ ուսմունքը, որը շատ խնդիրներ է պարզել կենդանի արարածների և մարդու բարձրագույն ներվային գործունեության վերաբերյալ, դուր չեկավ անզլիական ֆիզիոլոգների պարագլուխ Շիրինգտոնին։ Պավլովի հետ զրուցելիս նա ասաց, որ պայմանական ոեֆլեքսների ուսմունքը Անգլիայում հաջողություն չի կարող ունենալ, որովհետեւ նրանից «մատերիալիզմի հոտ է գալիս»։ Այսպիսով, բուրժուական գիտնականները վախենում են ամեն մի բացարձակապես ճիշտ ապացուցված գիտական փաստից, եթե նա որևէ շափով շամապատասխանի նրանց ոեակցիոն իդեոլոգիային։ Միևնույն ժամանակ զարմանալի է, որ նրանք չեն նկատում մատերիալիզմի «հոտը» (բերվող օրինակում արդեն աղավաղված կերպով հասկացած մատերիալիզմի), երբ ամերիկյան բժիշկները հայտարարում են, թե կշռելով մարդկանց, նրանց հաջողվել է որոշել մարդկանց հոգու

ծանրությունը, որը հավասար է մեկ ունցիայի (մոտ 30 գրամ) <sup>1:</sup>

Կրոնական խավարամոլության կենտրոնի՝ Վատիկանի ակադեմիայում ներկայումս «կրթություն» են ստանում և «գիտական որակավորում» ձեռք բերում ամերիկյան իմպերիալիզմի տերտերականության բազմաթիվ ապագա դիմումավոր գործակալները Վատիկանի ակադեմիան իր անդամների շարքում ունի բավական մեծ թվով ամերիկյան գիտնականներ։ Տեղին է այստեղ Հիշել Վ. Ի. Լենինի հետևյալ խոսքերը. «Վարձու ստրկության հասարակության մեջ անաշառ գիտության սպասելը՝ նույնպիսի հիմար միամտություն է, ինչպես գործարանատերերից անաշառություն սպասելը այն հարցում, թե հարկավոր չէ՞ արդյոք ավելացնել բանվորների վարձը՝ պակասեցնելով կապիտալի շահույթը» <sup>2:</sup>

Այստեղից հասկանալի է, թե ի՞նչպիսի անհեթեթությունների կարող են հասնել կապիտալիստական երկրների գիտնականները, որոնք առարկում են գիտության դեմ, հայտարարելով, որ «անհրաժեշտ է գտնել մի գիտություն, թե ի՞նչպես պայքարել գիտության դեմ» (Մասել):

Մեակցիոն գիտնականները մտահոգված են ո՛չ թե գիտության զարգացումով և առաջադիմությամբ, այլ հաճախ միայն նրա կեղծարարությամբ, որի նպատակն է փրկել կապիտալիստական հասարակարգի տատանվող ամոռությունները վերահս անխուսափելի կրախից։ Այդ իսկ պատճառով նրանք դիմում են ամեն մի միջոցի, որը կարող է որևէ շափով պահպանել նրանց խախտված քաղաքական հիմքերը։ Երբ ամերիկացիք արգելում են դպրոցներում դարվինիզմի դասավանդումը, որը խորտակեց մարդակենտրոնակցական աշխարհայացքը, և հալածում են դրանում մեղադրված պրոգրեսիվ ուսուցիչներին, կամ կազմակերպում են այսպես կոչված «կապկային պրոցեսներ», նրանք նկատի ունեն ո՛չ թե գիտության, այլ միայն կրոնի շահերը։ Շատ զարմանալի է, որ Հռոմի պապը, առարկելով դարվինիզմի դեմ, պատճառաբանում էր, որ Դարվինի

<sup>1</sup> Daily Telegraph, 1909: Բերված է Վ. Յանիլեսկու աշխատությունից. Врач, его призвание и образование. Харьков, 1921 г.

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Մարքսիզմի երեք աղբյուրներն ու երեք բաղկացուցիչ մասերը, Երկեր. Հատ. 19, Հայպետհրատ, 1950 թ., էջ 3:

ուսմունքը, անհեթեթ առակներից և ֆանտաստիկ հնարքներից բաղկացած լինելով, հակառակ է ճիշտ գիտությանը, դիտվող փաստերին և նույն իսկ բանականությանը:

Շատ տարօրինակ է տեսնել գիտության շահերի պաշտպանների շարքում կաթոլիկ եկեղեցու պետին, չէ՞ որ այդ եկեղեցին իր բազմադարյան գոյության ընթացքում միշտ եղել է գիտության ամենամեծ թշնամին. նա ամենից շատ է զբաղվել ազատ միտքը հալածելու և գիտության ամենաականավոր գործիչներին ոչնչացնելու գործով:

Եկեղեցին միշտ պաշտպանում էր «Հոգով աղքատներին». նա ամենադաժան թշնամին էր գիտության մեջ խիզախորեն նոր ուղիներ որոնողներին: Հոգմի պապ Պավել II-ը աներկիմաստ կերպով հայտարարել էր, որ «կրոնը պետք է ոչնչացնի գիտությունը, որովհետև գիտությունը կրոնի թշնամին է»: Այս խոսքերը սոսկ դեկլարատիվ հայտարարություններ չեին, որովհետև խոսքերին անմիջապես հաջորդում էին և համապատասխան գործողություններ: Ո՞վ ծանոթ չէ գիտության այնպիսի ականավոր գործիչների անուններին, ինչպիսիք են Զորդանո Բրունո, Գալիլեյ, Կոպենհանիկոս և ուրիշները, որոնք ամենասոսկալի հալածանքների էին ենթարկվել կաթոլիկ եկեղեցու կողմից, որովհետև այդ գիտնականների խոշոր հայտնաբերումները և գիտական նվաճումները չեին համապատասխանում կրոնական ավանդությունների հոգուն ու դոգմաներին: Գրքերի տպագրության գյուտից հետո, որով բացվեց մարդկային կուլտուրայի նոր դարաշրջան, այդ գյուտի հեղինակ Գուտենբերգը եկեղեցու կողմից ճանաշված էր, որպես «սատանայի ծառա»:

Կաթոլիկական հոգևոր ցենզուրան միայն 1822 թ. թույլ տվեց տպագրել այնպիսի գրքեր, որտեղ խոսվում էր երկրագնդի շարժման մասին արեգակի շուրջը: Մինչդեռ իտալական աստղաբաշխ գ'Ասկոլին 1327 թ. Ֆլորենցիայում այրված էր խարույկի վրա՝ նման կարծիքներ արտահայտելու պատճառով:

Այստեղից հասկանալի է, որ գիտության մեծագույն նվաճումները, որոնք մարդկությանը մղում են դեպի առաջադիմություն և կատարելություն, ունակցիոն գիտնականների ձեռքում հեշտությամբ փոխվում են իրենց հակադրությանը:

Գտնվում են, սակայն, բուրժուական գիտնականներ, որոնք հնարավոր են համարում գիտությունը հաշտեցնել կրոնի հետ, կամուրջ անցկացնել այդ երկու անհաշտելի գաղափարների միջև, մի բան, որ սկզբունքորեն բոլորովին անհնարին է: Գիտական հարցերի հունի մեջ իդեալիստական մեկնաբանումներ մտցնելու ամեն մի փորձ վերջին հաշվով ունենում է միայն մի նպատակ՝ բացահայտ կամ քողարկված ձևով ամրացնել կրոնական գաղափարների հիմունքները և այդպիսով, կանխել ժողովրդական մասսաների հարածուն հեռացումը կրոնից: Ուստի կրոնը գիտության հետ հաշտեցնելու ամեն մի փորձ պետք է արմատապես ժիտվի:

Գիտական ճշմարտությունները ճանապարհ են հարթում խավարամոլության դեմ ուժեղ և համառ պայքարով: Մեակցիոն տրադիցիաների ուժը և կենսունակությունը դրսեորվում է ավելի խիստ կերպով, երբ գործը հասնում է դասակարգային շահերին և իրավունքներին:

Թղթատման անիմաստ սովորույթը մինչև այժմ էլ տարածված է հավատացյալ մահմեղականների և հրեաների մեջ:

Մահմեղականության շիա դավանության հետևորդները ՍՍՌՄ-ի սահմաններից դուրս դեռ կատարում են կրոնական մի արարողակարգ, որը կոչվում է «շախսեյ-վախսեյ»: Հավատացյալներն ի հիշատակ տեղի ունեցած պատմական երկպառակտչական ճակատամարտի (680 թ.), որտեղ սպանվեց Խալիֆի գահի հավակնորդ Հուսեյնը, մասսայական թափորի մեջ ենթարկվում են մոլեուանդային ինքնաշարշարանքների: Ակնհայտ դասակարգային բնույթի պատճառով մեզանում այդ արարողությունն իսպառ վերացել է:

Հունվարի 6-ին ջրորհնեքի օրը, Թբիլիսիում, հավատացյալ հայերը սովորություն ունեին իրենց նետելու գետի մեջ, որտեղ կատարված էր օրհնության արարողությունը, «օրհնված» ջրի մեջ լողանալու համար, չնայած որ գետի ջուրը այդ ժամանակ խիստ սառն է լինում: Այդ երբեմն շատ վնասակար հետևանքներ է ունենում, որոնց մասին տեղեկություններ կան բժշկական գրականու-

թյան մեջ, ի միջի այլոց տեղեկություններ հաղորդվել են նաև մեր կողմից:

Այսպիսով, հին պայքարը գիտության և կրոնի, մատերիալիզմի ու իդեալիզմի միջև շի վերացել, նույնիսկ վերջին ժամանակներս ավելի է սրվել:

Համաշխարհային իմպերիալիզմի հենարանը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները մորիլիզացնում և ակտիվացնում են իրենց ուժերը ամբողջ աշխարհի առաջադիմության և կուլտուրայի լուսավոր կենտրոն՝ հաղթանակած սոցիալիզմի երկրի դեմ: Մեր երկրի իդեոլոգիան, որը հենվում է ամենաառաջավոր գիտական մեթոդոլոգիայի՝ մատերիալիստական դիալեկտիկայի վրա, արմատապես հակառակ է փուած աստվածաբանական դոգմաների վրա հիմնված, դատապարտված դասակարգի կողմից մշակվող և պաշտպանվող խավարամոլության:

Այժմ մի շատ կարևոր հարց է ծագում, թե ե՞րբ գիտությունը վերջնականապես կհաղթի կրոնին: Ի՞նչ ճանապարհներով տեղի կունենա մարդկային գիտակցության այդ իր դարն ապրած ձևի լիկվիդացիայի պրոցեսը, ամեն մի գիտական առաջադիմության արգելակ հանդիսացող հակագիտական իդեալիստական աշխարհայացքի վերացումը: Արդյոք նա կանհետանա՞ միայն դիտա-աթեիստական պրոպագանդայի հետևանքով, թե՞ այդ բանի համար պահանջվելու են ավելի խորը և ազդու հակակրոնական միջոցառումներ:

Կասկածից դուրս է, որ կրոնը ինքն իրեն շի անհետանա, իր, այսպես ասած, բնական ծերացման կամ նոա գաղափարական դրույթները հնանալու հետևանքով:

Կրոնական իդեոլոգիան, իր տրադիցիաների ուժի պատճառով, չափազանց կենսունակ է և նա շատ հեշտությամբ է կարողանում հարմարվել փոփոխվող, նոր իրադրության պայմաններին: Նախնադարյան հասարակության անհմիզմի կամ միստիկա-մոգական բժշկության, որը իշխում էր համարյա ամբողջ ստրկատիրական հասարակարգում, և ժամանակակից քրիստոնեական դավանանքների միջև տարբերությունը արտաքուատ չափազանց մեծ է: Բայց

այդ տարբերությունը վերաբերում է ո՞չ թե կրոնական պատկերացումների իմացաբանական կողմին, գաղափարային էության, կամ նրա հետ կապված սոցիալական հայացքներին, որոնք սովորաբար մնայուն են (օրինակ, ամեն մի կրոն պաշտպանում է շահագործման ձևերը և քարոզում է հրաժարումն շահագործական ռեժիմի դեմ պայքարից, հանուն ապագա անդրշիրիմյան կյանքի): Եվ իրոք մեծ է արդյոք տարբերությունը հին մարդու, որը հիվանդության ժամանակ փրկություն էր որոնում քրմական բժշկության դանաղան ֆանտաստիկ, սնոտիապաշտական ծեսերի մեջ, որ կատարում էին մոգերը, կախարդները և այլն, և այժմյան կուլտուրական եվրոպացու միջև, որը գնում է Լուրդ՝ իր տառապանքներից բուժվելու համար անդրկողմյան դերբնական ուժերի ազդեցությամբ։ Ասկեղիոսի կամ Իգիդային տաճարներում գործադրված հին պաշտամունքային բժշկությունից Լուրդում տեղի ունեցող բուժումը տարբերվում է ո՞չ թե գաղափարական կամ մեթոդական տեսակետից, այլ միայն իր արտաքին ձևերով՝ Լուրդում նա համապատասխանում է այժմյան ձևերին, իսկ հին երկրներում նա դուրս չէր գալիս հեթանոսական պաշտամունքի ընդունված ծիսական կերպարանքից։

Կրոնի վերջնական լիկվիդացիան կկատարվի միայն այն ժամանակ, եթե մարդկային կյանքից վերջնականապես կվերանան կրոնի բոլոր հասարակական, սոցիալական և տնտեսական հիմունքները, հետեւապես, եթե ոչ մի գործոն այլևս չի նպաստի կրոնական պատրանքների պահպանման։

Կրոնը կանհետանա, եթե կվերանան կապիտալիզմի դայլային օրենքները, ըստ որոնց մի դասակարգ սանձի մեջ է պահպան մյուսին, ստրկական հնագանդություն պահանջելով դրանից, եթե չեն լինի տնտեսական իրավագրկության շղթաներով կաշկանդված պրոլետարական մասսաները, եթե կվերանա արտադրության անիշխանությունը, պատերազմները և ամեն մի երևույթ, որ կազմում է կապիտալիզմի անկապտելի էությունը։ Այստեղից կարելի է գալ այն տրամաբանական եզրակացությանը, որ ապագա կոմունիստա-

կան հասարակարգում, երբ կրոնն այլևս չի ունենա ոչ մի հասարակական բազա, նա կվերանա որպես անցյալ հակամարտ հասարակական ֆորմացիաների պատմական վերապրով։ Իսկ մինչ այդ իր դարն ապրող իդեոլոգիայի մնացորդները դեռ կպահպանվեն մարդկանց հասարակական գիտակցության մեջ, այն մարդկանց, որոնք հաստատուն կերպով շեն յուրացրել դիալեկտիկա-մատերիալիստական փիլիսոփայության հիմունքները։

Չնայած, որ կրոնի սոցիալ-տնտեսական պայմանները մեր երկրում կորցրել են իրենց հիմունքները և մեղ մոտ չկան կրոնի պահպանման խնդրում շահագրգոված դասակարգեր, սակայն մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկները դեռ վերջնականապես շեն հաղթահարված, հետեւապես կրոնն առաջացնող ո՞չ բոլոր պայմաններն են լիովին վերացված։

Բացի ասվածից, մեր բնակչության ավագ սերնդի մի մասը ապրել է այն ժամանակ, երբ կրոնն անսահմանորեն իշխում էր մարդկանց հասարակական կյանքում և խառնվում նրանց մասնավոր կյանքի բոլոր մանրուքների մեջ։ Այդ սերնդի ներկայացուցիչների մի մասը կարող է տրադիցիայով, դուցե և համոզմունքով, պահպանած լինել հին կրոնական հավատը և նախապաշտումունքները, և այդ կերպ որևէ շափով ազդել շրջապատող մարդկանց հայացքների վրա, եթե նրանք անկայուն և լրիվ ձևակերպված շեն։

Հասարակական-տնտեսական ֆորմացիաները, բազիսը փոխվելուց հետո, շեն վերանում միանգամից, մարդկանց հասարակական գիտակցության հանկարծակի վերափոխումով։ Անցնում է ժամանակ, մինչև մարդկանց գիտակցությունը վերջնականապես վերափոխվում և հարմարվում է կյանքի նոր, պատմականորեն առաջացած ձևերին։ Դրա հետ միասին անցման էտապներում ամեն տեղ չէ, որ միաժամանակ են կատարվում կյանքի նորմաների փոփոխությունները։ Սոցիալ-տնտեսական տեսակետից առաջ գնացած երկրների կողքին մնում են այլ երկրներ, որտեղ հետամնաց հասարակական ձևերը դեռ որոշ շափով պահպանված են լինում։

Սովետական երկիրն ապրում է կապիտալիստական շրջապատում, որը դիմում է ամեն միջոցի՝ իր տատանվող հիմքերը ան-

խախտ պահելու համար։ Սոցիալիզմից կոմունիզմին անցնելու էտապում մեզ խանգարում է կապիտալիզմի մնացուկներից մեկը՝ կրոնը։

Կրոնը, ինչպես և մյուս խորթ իդեոլոգիաները կվերանան ո՞չ թե վարշական մի որևէ ակտով, այլ կհաղթահարվեն տևական ու խորացած գիտա-աթեիստական, բնագիտական գիտելիքների պրոպագանդա մղելով ազգաբնակության մեջ։ Միաժամանակ պայքարը կրոնի դեմ, որը դասակարգային պայքարի ճակատներից մեկն է, պետք է տարվի անտագոնիստական հասարակության հիմնական ախտի՝ կապիտալիստական սիստեմի դեմ, որը կրոնական խավարամոլության հիմնական հենարանն է։ Կրոնի սոցիալական արմատների վերացումով մարդ այլևս կարիք չի ունենա մխիթարվելու, որ անդրշիրիմյան կյանքում ինքը կստանա այն ամենը, որից զուրկ էր եղել երկրային կյանքում։

Կրոնի սոցիալ-տնտեսական արմատները և ժողովրդական մասսաների գիտակցությունից դրանք վերացնելու պայմանները առավելագույն պարզությամբ է ձևակերպել Վ. Ի. Լենինը. «Ինչո՞ւ է կրոնը պահպանվում քաղաքի պրոլետարիատի հետամնաց խավերի մեջ, կիսապրոլետարիատի լայն խավերի՝ ինչպես նաև գյուղացիության մասսայի մեջ։ Ժողովրդի տգիտության պատճառով,— պատասխանում է բուրժուական պրոգրեսիստը, ուղիկալը, կամ բուրժուական մատերիալիստը։ Հետեւաբար՝ կորչի՝ կրոնը, կեցցե՛ աթեիզմը, աթեիստական հայացքների տարածումը մեր գլխավոր խնդիրն է։ Մարքսիստն ասում է՝ Ճիշտ չէ։ Այդպիսի հայացքը մակերեսային, բուրժուական-սահմանափակ կուլտուրականություն է։ Այդպիսի հայացքը ոչ բավարար խորությամբ, ոչ մատերիալիստուրեն, այլ իդեալիստորեն է բացատրում կրոնի արմատները։ Արդի կապիտալիստական երկրներում այդ արմատները գլխավորուես սոցիալական են... Լուսավորական ոչ մի գրքույկ չի կարող արմատախիլ անել կրոնը կապիտալիստական տաժանակրությունից ընկըճված մասսաների միջից, որոնք կախում ունեն կապիտալիզմի կույր կործանարար ուժերից, քանի դեռ այդ մասսաներն իրենք չեն սովորի միահամուռ, կազմակերպված, պլանաշափ, գիտակցորեն

պայքարել կրոնի այդ արմատի դեմ, կապիտավոր ամեն ձեր տիրապետության դեմ»<sup>1:</sup>

Այստեղից պարզ է դառնում, թե տվյալ էտապում ինչպես պետք է տարվի գիտա-աթեխտական պրոպագանդան: Ասպարեզը այդ պայքարում հոժարաբար չի զիշվի, առանց հակասությունների խիստ բախումների՝ երկու միմյանց միանգամայն հակասող իշեոլոգիաների՝ մատերիալիստական դիալեկտիկայի և փիլիսոփայական իդեալիզմի միջև: Այդ պայքարի մեջ լուսավորական աշխատանքը, իհարկե, կգրավի իր տեղը. բայց գիտությունը կրոնի դեմ վերջնական հաղթանակը կտանի միայն ունվազուցիոն վերակազմական մեթոդներով: Պայքարը միայն լուսավորական մեթոդներով, մանավանդ վարչական և արգելման միջոցներով կրոնի վերացման փորձերը, որոնք կարող են՝ տպավորություն ստեղծել, որ պարտված կողմը բռնության և հալածանքների զոհ է դարձել, միանգամայն դատապարտված են մարքսիզմի կլասիկների կողմից, «Կրոնի դեմ պայքարը չի կարելի սահմանափակել վերացական-իդեոլոգիական քարոզով, չի կարելի այդպիսի մի քարոզի վերածել այն, այդ պայքարը պետք է կապակցել դասակարգային շարժման կոնկրետ գործնականի հետ, այն շարժման, որն ուղղված է դեպի կրոնի սոցիալական արմատների ոչնչացումը»<sup>2:</sup>

Խավարամոլության այժմյան մեծագույն կենտրոն Վատիկանը, իր մարտնչող իդեալիզմով հանդերձ, քաղաքական բլոկներ է կազմակերպում իր գաղափարական դիրքերի ամրացման համար: Ինելով ամերիկյան իմպերիալիզմի հավատարիմ դաշնակիցը, Վատիկանը մոռանում է կաթոլիկ եկեղեցու և անգլիական բողոքական կրոնական համայնքի դոգմաների տարբերությունը: Մինչդեռ անցյալում քրիստոնեական առանձին դավանությունների մեջ երբեք չի եղել, նույնիսկ հիմնական հարցերում, համերաշխություն կամ միասնություն: Իր ժամանակին զերմեռանդ կաթոլիկները ընդունակ էին կազմակերպելու անասելի բարբարոսական, այսպես կոչված,

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Թանվորական պարտիայի վերաբերմունքը դեպի կրոնը, Երկեր, Հատ. 15, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., էջ 504—505:

<sup>2</sup> Նույն տեղում:


բարթուղիմյան գիշերներ, որպեսզի արյան հեղեղում ոչնչացնեն տասնյակ հազարավոր այլ դավանանքի քրիստոնյաններին՝ բողոքական հուգենոտներին, հանուն ո՛չ շատ էական կրոնական հակասությունների<sup>1</sup>: Սակայն ներկայումս կրոնի առջև դրված է լինելու կամ չինելու խնդիրը: Ուստի այժմյան կրոնական պարագլուխները պատրաստ են ամեն տեսակի համաձայնությունների մեջ մտնել, միայն թե պահպաննե իրենց գոյությունը ապագա համաշխարհային ռելյուցիայի հրեղեն փոթորկի մեջ, որը սպառնում է ոչնչացնել առանց մնացորդի այն բոլորը, ինչ որ կրում է հնացած աստվածաբանական դոգմաների հետքեր:

Սովետական գիտությունը, սովետական բժշկությունը, որը իր գիտական որոնումների մեջ միայն ճշմարտություն է փնտրում և շահագրգոված է գիտությունը անխոցելի, ճիշտ մեթոդների վրա դնելու, միանգամայն հրաժարվում է ամեն տեսակի ռեակցիոն իդեոլոգիայից: Մեր գիտությունն ընդունում է միայն մի մեթոդոլոգիական բազա՝ մատերիալիստական դիալեկտիկան: Այս ուղղությամբ միայն կարելի է նվաճել գիտական այն մեծագույն ամրությունները, որոնց հաղթահարման է կոչում մեր փառապանծ Կոմունիստական պարտիան: Մեզ անհրաժեշտ է, նոր դարաշրջանի մարդկանց վայել հաստատակամությամբ, տանել նպատակասլաց պրոպագանդա, հաղթահարելու համար բոլոր տեսակի հետամնաց և հնացած հասարակական գիտակցության ձևերը, որոնցից մեկը նաև կրոնական իդեոլոգիան է:

<sup>1</sup> Ֆրանսիայում, ավելի մեծ չափով Փարիզում, 1572 թ. օգոստոսի 26-ին կաթոլիկները կազմակերպեցին հուգենոտների մասսայական կոտորած:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0010360

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿՈՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍ ԸՆՄԱՅԱԾ ԲՐՈՇՅՈՒՐՆԵՐԻ, 1954 ԹՎԻՆ

## ՀԵղինակ

Ռուբեն Զարյան  
Փիլոլոգ. գիտ. թեկն.

Ի. Դ. Բոյկո  
պատմ. գիտ. թեկն.

Ա. Մ. Կորողյան  
գյուղ. գիտ. թեկն.

Ն. Մ. Գասպարյան  
փիլիսոփ. գիտ. թեկն.

Խ. Հ. Բարսեղյան  
պատմ. գիտ. թեկն.

Խ. Հ. Դանիելյան  
Հնկերության իսկ. անդ.

Ա. Գ. Երիցյան  
գյուղ. գիտ. թեկն.

Բ. Մ. Մկրտչյան  
Շահումյանի շրջ. կալի-  
նինի անվ. կոլտնտ. նախ.

Շ. Ռ. Հարուրյունյան  
պատմ. գիտ. թեկն.

Հ. Գ. Թումանյան  
գյուղ. գիտ. թեկն.

Ա. Կարապետյան  
պատմ. գիտ. թեկն.

Մ. Նահապետյան  
Փիլոլոգ. գիտ. թեկն.

Վ. Գ. Կորիննով

Վ. Հ. Գուլբանյան  
Հայկ. ՍՍԻ ԳԱ իսկ. անդ.

Ա. Մ. Եսայան  
Պրոֆեսոր, իրավաբան,  
գիտությունների դոկտ.

Հ. Ա. Բաղալյան  
Փիզ-մաթ. գիտ. թեկն.

## Բրոշյուրի անունը

Պայքար ռեալիզմի համար հայ թատրո-  
նում, 29 էջ, գինը 50 կ.

Ռուսաստանի հետ Ռւկրաինայի վերամի-  
ավորման երեքհարյուրամյակը, 46 էջ, գինը 60 կ.,  
ինչպես ստանալ մեղքի բարձր բերք,  
32 էջ, գինը 50 կ.

Արտադրողական ուժերի բնույթին ար-  
տադրական հարաբերությունների պար-  
տադիր համապատասխանության օրենքի  
մասին, 36 էջ, գինը 50 կ.

Ստեփան Շահումյանի կյանքն ու ռե-  
վոլյուցիոն գործունեությունը, 42 էջ, գինը 60 կ.

Վատիկանը միջազգային լմպերիալիզմի  
սպասարկուն է, 27 էջ, գինը 40 կ.

Անասնաբուծության մթերատվութ. բարձ-  
րացման փորձը ՀՍՍՌ-ում, 35 էջ, գինը 50 կ.

Մեր կոլտնտեսության աշխատանքի փոր-  
ձը հանրային անասնաբուծության զար-  
գացման բնագավառում, 31 էջ, գինը 40 կ.

Հայ և ռւկրաինական ժողովուրդների բա-  
րեկամությունը, 34 էջ, գինը 50 կ.

Բամբակենու լվիճները և պայքարը  
նրանց դեմ, 24 էջ, գինը 40 կ.

Ստեփան Շահումյանի ռեվոլյուցիոն գոր-  
ծունեությունը կովկասում 1917-1918  
թվականներին, 38 էջ, գինը 60 կ.

Հովհաննես Թումանյանը ժողովուրդների  
բարեկամության և խաղաղության երգիչ,  
32 էջ, գինը 40 կ.

Սովետական Միության միջազգային  
դրությունը և ժողովուրդների պայքարը  
խաղաղության պաշտպանության համար,  
38 էջ, գինը 60 կ.

Ցորենի սելեկցիայի և սերմնաբուծու-  
թյան մասին, 43 էջ, գինը 60 կ.

Սոցիալիստական սեփականությունը և  
նրա պահպանումը, 26 էջ, գինը 40 կ.

Արեգակի լրիվ խավարումը 1954 թվա-  
կանի հունիսի 30-ին, 40 էջ, գինը 60 կ.

Պահանջեցեք բոլոր դրախանութներից և կիոռկներից:

Պատվերներն ուղարկել հետեւյալ հասցեով՝ Երևան, Տերյան 91, Հայպերք: